II

ԴԱՐԴԱՆԵԼՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱԿՈՒՂԻՆ

ՀԱՅԿ ՆԱԶԱՐՅԱՆ

XX դարասկզբին Կայսերական Գերմանիան, խախտելով ուժերի հավասարակշռությունը եվրոպական մայրցամաքում, արագացրեց Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումը:

Սակայն երբ բրիտանական էքսպեդիցիոն զորքերը ֆրանսիական բանակի հետ 1914 թ. սեպտեմբերին Մառնի ճակատամարտում կանգնեցրին գերմանական բանակին և այդպիսով ձախողեցին "Շլիֆֆենի պլանը", գերմանական Գլխավոր շտաբն ակտիվացրեց քայլերը՝ արագացնելու համար Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելը, դրանով իսկ Արևելքում Մեծ Բրիտանիայի ու Ռուսաստանի դեմ նոր ռազմաճակատների բացումը: 1914 թ. օգոստոսի 2-ին, երբ օսմանյան կառավարությունը պաշտոնապես հայտարարեց պատերազմում իր "չեզոքության" մասին, Կոստանդնուպոլսում Մեծ վեզիր և արտգործնախարար Սայիդ Հալիմն ու դեսպան Հանս ֆոն Վանգենհայմը ստորագրեցին գերմանաթուրքական գաղտնի համաձայնագիր, որի 4-րդ հոդվածով Գերմանիան պարտավորվում էր Ռուսաստանի կողմից սպառնացող վտանգի դեպքում իր զինված ուժերով պաշտպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը[1]: Արդեն օգոստոսի 6-ի գերմանաթուրքական լրացուցիչ համաձայնագրի 5-րդ հոդվածով ճշգրտվում էին Օսմանյան կայսրության Արևելյան սահմանները, և Գերմանիան երաշխիքներ էր տալիս Թուրքիային՝ Ռուսաստանում բնակվող մահմեդականների հետ ուղղակի կապ հաստատելու մասին[2]: Դա նշանակում էր գերմանական աջակցությամբ Թուրքիայի կողմից Այսրկովկասի բռնակցումը, ինչը սպառնալիք էր ստեղծելու նաև բրիտանական ասիական տիրույթների անվտանգության համար:

Ստեղծված պայմաններում Միջերկրական ծովում անգլո-ֆրանսիական ռազմանավերի հետապնդումից խուսափած գերմանական "Գեբեն" և "Բրեսլաու" հածանավերի (փոխծովակալ Վիլհելմ Սուշոնի հրամանատարությամբ) հաջող ճեղքումը և մուտքը Դարդանել (օգոստոսի 10-ին), ինչպես գերմանական ռազմածովային նավատորմի գլխավոր հրամանատար, ծովակալ Ալֆրեդ ֆոն

---

[1] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 430, ց. 1, գ. 1386, թ. 1:*

[2] *Նույն տեղում, թ. 3:*

Տիրպիցն է բնորոշել՝ "վերջնականապես լուծեց թուրքական հարցը"[3]: 1914 թ. սեպտեմբերի 26-ին թուրքական ռազմանավերից մեկը Դարդանելից դուրս գալուց կանգնեցվում է բրիտանական ռազմանավերի կողմից և ստիպված լինում ետ վերադառնալ[4]: Սա առիթ է տալիս, որպեսզի թուրքական իշխանությունները սեպտեմբերի 27-ին փակեն նեղուցները[5]:

1914 թ. հոկտեմբերի 16-ին (Նոր տոմարով՝ 29-ին) գերմանաթուրքական նավատորմն առանց պատերազմ հայտարարելու ռմբակոծում է սևծովյան ռուսական նավահանգիստները: Միաժամանակ նույն օրը Եգիպտոսի Սինայի թերակղզու սահմանին կենտրոնացված թուրքական 4-րդ բանակի առաջապահ ուժերը՝ շուրջ 2000 բեդուինից կազմված զորախումբը[6], Գազայի ուղղությամբ անցան հարձակման՝ նպատակ ունենալով ճեղքել բրիտանական պաշտպանությունը և դուրս գալ Սուեզի ջրանցքի շրջանը: Ստեղծված իրավիճակում 1914 թ. նոյեմբերի 2-ին Ռուսաստանը, իսկ նոյեմբերի 5-ին և 6-ին Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան պատերազմ են հայտարարում Օսմանյան կայսրությանը: 1914 թ. նոյեմբերի 11-ին և 23-ին Օսմանյան կայսրության սուլթան Մեհմեդ V-ն ու Շեյխ-ուլ-իսլամ Մուսթաֆա Հեյրին հայտարարում են "Ջիհադ" ("սրբազան պատերազմ") Անտանտի տերություններին՝ նպատակ ունենալով կազմակերպելու Ռուսաստանի տիրույթների և Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի գաղութների մահմեդական բնակչության կողմից ապստամբության բարձրացումը:

Ելնելով իր չեզոքության մասին հայտարարած (1914 թ. նոյեմբերի 2-ին)[7] Պարսկաստանում գերմանաթուրքական կողմի ակտիվությունից՝ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովը տեղյակ է պահում Լոնդոնում գտնվող իր դեսպան Ալեքսանդր Բենկենդորֆին այն մասին, որ ռուսական զորքերը ստիպված կլինեն խախտել Պարսկաստանի չեզոքությունը[8]: Բրիտանական կողմը, սակայն, հավանություն չի տալիս ռուսական կողմի այդպիսի հնարավոր գործողություններին[9]: Մեծ Բրիտանիան ցանկանում էր կանխել ռուսական ներխուժումը, որպեսզի պահպաներ Իրանում "բրիտանական ազդեցության գոտին", պաշտպանված մնային "Անգլո-պարսկական ընկերությանը"

---

[3] А. Тирпиц. Воспоминания. М., 1957, с. 359.

[4] *Պատմութիւն համաշխարհային պատերազմի և հայկական հարցը. Պատրաստուած "Թայմզ" լրագրի կողմէ, հ. Գ, թարգմ. անգլ., Կ. Պոլիս, 1919, էջ 296:*

[5] *Վ. Բայբուրդյան. Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 645:*

[6] G. H. Allen. The Great war. Vol. 1, Philadelphia, 1915, p. 317.

[7] *Վ. Բայբուրդյան. Իրանի պատմություն, Երևան, 2005, էջ 537:*

[8] В. В. Готлиб. Тайная дипломатия во время Первой мировой войны. Пер. с англ. М., 1960, с. 97.

[9] Дж. Бьюкенен. Мемуары дипломата. Пер. с англ. М., 1925, с. 139.

պատկանող նավթային պաշարները և Պարսից ծոցը, որն ապահովում էր պարսկական նավթի անխափան մատակարարումն իր ռազմածովային նավատորմին: Այս ամենը հաշվի առնելով՝ արտգործքարտուղար (արտգործնախարար) Էդուարդ Գրեյը նոյեմբերի 14-ին ռուսական կողմին հայտնում է, որ եթե Ռուսաստանը չխախտի Պարսկաստանի չեզոքությունը և դրա փոխարեն ակտիվ հարձակում սկսի Կովկասյան ռազմաճակատում ու իր հիմնական ջանքերը կենտրոնացնի ընդդեմ գերմանացիների, ապա այդ դեպքում Սևծովյան նեղուցների հարցը կլուծվի ռուսների օգտին[10]: Այս քայլով բրիտանացիները, նեղուցները Ռուսաստանին հանձնել խոստանալով, փորձում էին իրենց պահել Պարսկաստանը:

Սակայն 1914 թ. նոյեմբերի 21-ին Պարսկաստանի չեզոքությունը խախտած թուրքական բանակի և ռուս գեներալ Ֆյոդոր Չերնոզուբովի հրամանատարությամբ գործող, այսպես կոչված, "Ադրբեջանական զորաջոկատի" միջև սկսվում են ռազմագործողություններ:

Պարսկաստանի չեզոքության խախտման ֆոնի վրա՝ 1914 թ. դեկտեմբերի 18-ին՝ Ֆրանսիայի կողմից Մարոկոյի նկատմամբ պրոտեկտորատ հայտարարելու օրը, բրիտանացիները հայտարարեցին Եգիպտոսի նկատմամբ պրոտեկտորատ հաստատելու մասին[11]: Ստեղծված իրավիճակում Պետրոգրադում ամրապնդվեց այն գաղափարը, որ Սևծովյան նեղուցների հարցը կարող էր լուծվել միայն Ռուսաստանի օգտին:

1914 թ. դեկտեմբերի 9-ին թուրքական 3-րդ բանակը (հրամանատար՝ Էնվեր փաշա, շտաբի պետ՝ գեներալ Ֆրիդրիխ Բրոնզարտ Ֆոն Շելենդորֆ) իր գլխավոր հարվածը հասցնում է Սարիղամիշ–Կարս ուղղությամբ: Սարիղամիշի ռազմագործողությունը[12] խուճապ է առաջացնում Պետրոգրադում: Ռուսական գլխավոր շտաբի մշակած պլանի համաձայն՝ թուրքական ուժերի գերազանցության ու սահմանագծի պաշտպանության անհնարինության դեպքում՝ ռուսական բանակը պետք է նահանջեր դեպի Կովկասյան լեռնաշղթայի գլխավոր գիծը և, օգտագործելով նրա դժվարամատչելիությունը, պահեր նավթով հարուստ տնտեսական խոշոր կենտրոն Բաքուն՝ ձախ թևում, իսկ Կովկասն ու Այսրկովկասն իրար հետ կապող ռազմավարական ճանապարհը՝ կենտրո-

---

[10] Константинополь и проливы. По секретным документам б. Министерства иностранных дел, т. 1. Под ред. Е. А. Адамова. М., 1925, с. 233–234.

[11] В. В. Готлиб. *Նշվ. աշխ., էջ 105:*

[12] *Սարիղամիշի ռազմագործողության մասին մանրամասն տե՛ս՝* Н. Корсун. Сарыкамышская операция. М., 1937.

նում[13]: Գերագույն-գլխավոր հրամանատար, Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչը 1915 թ. հունվարի 2-ին նամակով դիմում է Մեծ Բրիտանիայի ռազմական նախարար (քարտուղար) ֆելդմարշալ Հորացիո Հերբերտ Քիթչեներին՝ խնդրելով դաշնակիցներին հարված հասցնել թուրքական բանակին՝ թուլացնելու համար ճնշումը Կովկասյան ռազմաճակատում[14]:

Ըստ այդմ՝ բրիտանական ռազմաքաղաքական ղեկավարության շրջանում (արտգործքարտուղար՝ Է. Գրեյ, գանձատան կանցլեր՝ Դեյվիդ Լլոյդ Ջորջ, լորդ Արթուր Բալֆուր)՝ Ծովակալության Առաջին լորդ Ուինսթոն Չերչիլի գլխավորությամբ առաջ եկավ Դարդանելում դաշնակիցների ռազմածովային ուժերի մասնակցությամբ ռազմագործողություն իրականացնելու և այդպիսով ռազմավարական մի քանի խնդիր լուծելու ծրագիր: Արևմտյան ռազմաճակատում սկսված դիրքային "խրամատային պատերազմը" ճեղքում առաջ չէր բերում կողմերից և ոչ մեկի համար: Է. Գրեյն իր հուշերում գրում էր, որ այդ ժամանակ իրավիճակն Արևմտյան ռազմաճակատում ծանր էր, հատկապես, Դաշնակիցների համար. հետևաբար, անհրաժեշտություն կար մեկ այլ ռազմաճակատում իրականացնել այնպիսի ռազմագործողություն, որը կթուլացներ գերմանական կողմի ճնշումն Արևմտյան ռազմաճակատում[15]: Աստիճանաբար Լոնդոնում ուժեղանում է Գերմանիային Արևելքում անուղղակի հարված հասցնելու գաղափարը: Ի դեպ, 1914 թ. դեկտեմբերի 28-ին Մեծ Բրիտանիայի Ռազմական խորհրդի քարտուղար Մորիս Հենկին այն կարծիքն է արտահայտում, որ Գերմանիային "ամենաարդյունավետ հարվածը" կարող է հասցվել Թուրքիայի միջոցով[16]:

Դեռևս 1914 թ. սեպտեմբերին, երբ Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելը ժամանակի հարց էր, Ու. Չերչիլը ծրագրել էր ռազմագործողություն, ըստ որի՝ հունական բանակի օգնությամբ պետք է գրավվեր Գալիպոլի թերակղզին, իսկ բրիտանական ռազմա-ծովային նավատորմը մտներ Մարմարա ծով[17]: Սակայն պատերազմում Հունաստանի չեզոքությունը բացառեց այս ծրագիրը:

Արդեն դեկտեմբերին բրիտանական կողմն առաջ քաշեց մի նոր ռազմագործողության ծրագիր. այն է՝ իրականացնել ֆրանս-բրիտանական ցամաքային միացյալ ուժերի ափհանում Սալոնիկում: Սակայն ֆրանսիական կառավա-

---

[13] Е. В. Масловскій. Міровая война на Кавказскомъ фронте 1914–1917 г. Стратегическій очеркъ. Парижъ, 1933, с. 31.

[14] B. H. Liddell Hart. The strategy of indirect approach. London, 1954, p. 253.

[15] Viscount Grey of Fallodon. Twenty Five Years 1892–1916, vol. 2, New York,1925, p. 78.

[16] В. В. Готлиб. *Նշվ. աշխ., էջ 110:*

[17] *Նույն տեղում:*

րությունում իշխող մտավախությունները Բալկաններում Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի ազդեցության ավելի ուժեղացման ու Բալկանյան հարցի լուծումից Ֆրանսիայի դուրս մղման հնարավորության մասին, ինչպես նաև Ֆրանսիայի բանակի գլխավոր հրամանատար, գեներալ Ժոզեֆ Ժոֆրի կողմից Արևմտյան ռազմաճակատից այլ ռազմաճակատ զորքեր տեղափոխելուն դեմ արտահայտվելը՝ վիժեցրին նաև Սալոնիկի ռազմագործողության իրականացումը[18]*: Կայսերական Գլխավոր շտաբի պետ, միաժամանակ Ֆրանսիայում բրիտանական էքսպեդիցիոն ուժերի շտաբի պետ, գեներալ Ուիլյամ Ռոբերտսոնը նույնպես դեմ է արտահայտվում ֆրանս-բրիտանական ցամաքային զորքերի մասնակցությանը Դարդանելյան ռազմագործողությանը՝ հիմնավորելով, որ ամեն ինչ վճռվում է ֆրանս-գերմանական ռազմաճակատում*[19]*:*

1915 թ. հունվարի 3-ին Ծովային Առաջին լորդ (Ռազմածովային ուժերի Շտաբի պետ), ծովակալ Ջոն Ֆիշերը Ու. Չերչիլին գրած նամակում անհրաժեշտություն է համարում բրիտանացիների կողմից Հայֆայի և Ալեքսանդրետի նավահանգիստների գրավումը, որը հնարավորություն կտար վերահսկողության տակ վերցնել նավթային հարուստ պաշարներ ունեցող Միջագետքը: Միաժամանակ, ըստ Ջ. Ֆիշերի, հունական բանակը պետք է շարժվեր դեպի Գալիպոլի, բուլղարական բանակը՝ Կոստանդնուպոլիս, իսկ բրիտանական ռազմածովային ուժերը մտնեին Դարդանել[20]*: Ալեքսանդրետի (Հալեպի հետ) գրավման գաղափարը պաշտպանում էր նաև ռազմական նախարար Հ. Քիթչենները: Սիրիայի գրավումը թույլ կտար կտրել բաղդադյան երկաթգիծը՝ կանխելով թուրքական բանակների համալրումը Միջագետքյան ու Կովկասյան ռազմաճակատներում և թիկունքից հարված հասցնել դեպի Սուեզը գրոհող թուրքական 4-րդ բանակին: Դրա համար, ըստ Հ. Քիթչենների, անհրաժեշտ կլինեին բրիտանական փոքրաթիվ զորախումբ և գործակալների կողմից տեղացի ժողովուրդներից կազմված զինված խմբեր*[21]*: Սակայն այս ծրագրին նույնպես դեմ արտահայտվեց Ֆրանսիան, որը Կիլիկիան, Ալեքսանդրետը, Սիրիան համարում էր իր շահերի ու ազդեցության գոտի և, հետևաբար, չէր կարող թույլ տար, որպեսզի բրիտանացիները Սուեզի անվտանգության ապահովման պատրվակով օկուպացնեին այդ տարածքները: Ի վերջո, Ու. Չերչիլը հրաժարվեց Ալեքսանդրետ ափհանում իրականացնելու մտքից, ինչի դիմաց ֆրանսիական կող-*

---

[18] *Նույն տեղում:*

[19] *Տարտանելի պատերազմը. Քաղուած զանազան հրատարակութիւններէ, Պեյրութ, 1939, էջ 13:*

[20] В. В. Готлиб. *Նշվ. աշխ., էջ 111:*

[21] G. H. Cassar. Kitchener's war. British strategy from 1914 to 1916, Washington D. C., 2004, p. 120.

մից ստացավ հավաստիացում՝ ֆրանս-բրիտանական համատեղ ռազմածովային ռազմագործողություն իրականացնելու մասին[22]:

1915 թ. հունվարի 5-ին բրիտանական Ռազմական խորհրդի նիստում Դարդանելը համարվեց ամենահարմար շրջանը՝ համատեղ ռազմածովային ռազմագործողություն իրականացնելու համար[23]: Ռազմագործողության հաջող ելքի դեպքում կվերականգնվեր կապը դաշնակից Ռուսաստանի հետ, կմիավորվեին Կովկասյան ռազմաճակատի ռուսական և Միջագետքյան ռազմաճակատի բրիտանական բանակներն ու կվերաբացվեին Դարդանելի և Բոսֆորի նեղուցները, որոնք ռազմավարական ու կենսական նշանակություն ունեցող ուկրաինական ցորենի և կովկասյան նավթի արտահանման գլխավոր ուղիներն էին: Հաղթանակը կկանգնեցներ նաև թուրքական 4-րդ բանակի (մոտ 25 000 զինվոր)[24] առաջխաղացումը Սուեզի ջրանցքի շրջանում, հնարավոր կդարձներ Բաղդադի և Մոսուլի գրավումը, ինչի արդյունքում կխորտակվեր "Բեռլին–Կոստանդնուպոլիս–Բաղդադ" աշխարհառազմավարական առանցքը: Հաղթանակը, ինչպես պնդում էր Հնդկաստանի փոխարքա Չ. Հարդինգը, կնպաստեր նաև Պարսկաստանում ու Աֆղանստանում մահմեդական բնակչության պրոգերմանական և հակաանգլիական տրամադրությունների փոփոխմանը[25]: Վերջապես, ռազմագործողության հաջողությունն ոչ միայն կհանգեցներ Օսմանյան կայսրության պարտությանն ու պատերազմից դուրս գալուն, այլև դաշնակիցներն իրենց ազդեցությունը կհաստատեին Դարդանելում, Փոքր Ասիայում և Բալկաններում: Արդյունքում՝ որպես իրենց դաշնակիցներ, պատերազմի մեջ կներքաշեին Հունաստանին, Բուլղարիային, Ռումինիային ու Իտալիային, ինչը իր հերթին կարագացներ Ավստրո-Հունգարիայի պարտությունը և բրիտանական ռազմածովային նավատորմը Դանուբ գետով կներթափանցեր Հաբսբուրգների կայսրության սիրտը՝ Վիեննա[26]: Այդպիսով, Դարդանելյան ռազմագործողությունը, ինչպես բնորոշում է բրիտանացի ռազմավարագետ Լիդլ Հարտը, լինելու էր "ուղղակի գործողություն" ընդդեմ օսմանյան Թուրքիայի, և միաժամանակ "անուղղակի գործողություն" ընդդեմ Կենտրոնական տերությունների[27]:

Սակայն, ռուսական Կովկասյան բանակը, 1914 թ. դեկտեմբերի կեսերին Սարիղամիշում անցնելով հակահարձակման, մինչև 1915 թ. հունվարի 5-ը ընկած

---

[22] В. В. Готлиб. *Նշվ. աշխ., էջ 115:*

[23] М. Гилберт. Первая мировая война. Пер. с англ. М., 2016, с. 181.

[24] Djemal Pasha. Memories of a Turkish statesman.1913–1919. New York, 1922, p. 152.

[25] М. Гилберт. *Նշվ. աշխ., էջ 194:*

[26] *Նույն տեղում, էջ 181:*

[27] B. H. Liddell Hart. *Նշվ. աշխ., էջ 255:*

ժամանակահատվածում շրջապատում և ջախջախում է 90 հազարանոց թուրքական 3-րդ բանակը: Սա բրիտանական կառավարող շրջանակներում առաջ բերեց մտավախություն, թե կոզակները (ռուսները), հաղթահարելով Հայկական բարձրավանդակը, շուտով միայնակ կգրավեն Կոստանդնուպոլիսը[28]: Դա ավելի արագացրեց Դարդանելյան ռազմագործողությունը սկսելու մասին որոշման կայացումը: Բրիտանական Ռազմական խորհրդի հունվարի 13-ի նիստում ծովակալ Ջ. Ֆիշերը դեմ է արտահայտվում ցանկացած ռազմագործողության, որը չէր նախատեսում ռազմածովային ուժերի և ցամաքային զորքերի համատեղ մասնակցությունը[29]: Ինչպես ռազմագիտական փորձն էր ցույց տվել ճապոնացիների կողմից Պորտ Արտուրի (1905 թ.) և Դաշնակիցների կողմից Սևաստոպոլի (1855 թ.) գրավման ժամանակ՝ խնդիրը դրական լուծում կարող էր ստանալ համատեղ՝ ցամաքային-ծովային ռազմագործողության իրականացման դեպքում:

Եվ չնայած շատերը, այդ թվում՝ Ջ. Ֆիշերն ու Հ. Քիթչենները դեմ էին, այնուամենայնիվ, հաղթանակեց Ու. Չերչիլի ծրագիրը: Բրիտանական Ռազմական խորհրդի՝ հունվարի 28-ի նիստում ընդունվեց որոշում Դարդանելում միայն ռազմածովային ռազմագործողություն սկսելու մասին[30]: Այն իրականացնելու համար Դաշնակիցները Միջերկրական ծովում կենտրոնացրին մի քանի տասնյակ ռազմանավերից կազմված ռազմածովային խոշոր խմբավորում՝ "Դրեդնոութ" դասին պատկանող բրիտանական խոշորագույն "Քուին Էլիզաբեթ" գծանավի գլխավորությամբ:

Դարդանելի շրջանում բրիտանական ռազմագործողություն սկսելու հանգամանքն ամենևին էլ անսպասելի չէր Բեռլինի համար: Դեռևս 1914 թ. դեկտեմբերին Գերմանիայի ռազմաքաղաքական շրջանակներում քննարկվում էր այն հարցը, թե Սուեզի շրջանում գերմանաթուրքական ուղղակի ռազմական գործողությունները, հուսահատություն առաջ բերելով Մեծ Բրիտանիայում, վերջինիս ստիպելու է ռազմական գործողություններ սկսել Դարդանելում[31]: Ինչպես նշում էր ամերիկացի խոշոր ռազմավարագետ, ծովակալ Ալֆրեդ Մահանը՝ ո՛չ Գերմանիան և ո՛չ էլ Մեծ Բրիտանիան չէին կարող իրենց գերակշռությունը

---

[28] Е. Ф. Людшувейт. Турция в годы Первой мировой войны. 1914–1918 гг. М., 1966, с. 128.

[29] J. Fisher. Memories. London, New York, 1919, p. 69.

[30] A. J. P. Taylor. English history.1914–1945. Oxford, 1985, p. 24.

[31] F. G. Weber. Eagles on the Crescent. Germany, Austria and the diplomacy of the Turkish alliance.1914–1918. Ithaca-London, 1970, p. 100.

հաստատել Լևանտում ու Սուեզում, առանց Բոսֆորին և Դարդանելին տիրելու ու այդպիսով փակված Սև ծովն անառիկ ռազմաբազայի վերածելու[32]:

Օսմանյան բանակի ինժեներական զորքերի պետ, գերմանացի գեներալ Էրիխ Վեբերի գլխավորությամբ ամրացվել էին նեղուցների շրջանում եղած 13[33] ամրություն (ֆորտ): Գերմանացի փոխծովակալներ Ուզեդի և Մարտենի գլխավորությամբ իրականացվել էր Դարդանելյան ու Սևծովյան նեղուցների ջրերի բազմաշերտ (թվով 10-ը)[34] ականապատում: Գարնանը նեղուցների շրջան է ժամանում գերմանական 14 սուզանավ[35]: Կոստանդնուպոլսի շրջանում և Գալիպոլի թերակղզում տեղակայված էր գեներալ Լ. ֆոն Սանդերսի հրամանատարությամբ գործող թուրքական 1-ին բանակը, իսկ նեղուցների ասիական ափին՝ Վեհիբ փաշայի հրամանատարությամբ գործող թուրքական 2-րդ բանակը: Այս երկու բանակը միասին ունեին շուրջ 200.000 զինվոր[36]: Մարտ ամսին գեներալ Լ. ֆոն Սանդերսը ստանձնում է Գալիպոլի թերակղզում նոր ձևավորվող թուրքական 5-րդ բանակի հրամանատարությունը, իսկ 1-ին բանակի հրամանատարի պաշտոնում նրան փոխարինում է ֆելդմարշալ Կոլմար ֆոն դեր Գոլցը:

1915 թ. փետրվարի սկզբին Մեծ Բրիտանիայի Ռազմածովային շտաբի կողմից հաստատվում է Դարդանելյան ռազմագործողությունը սկսելու մասին հրամանը[37]: Բրիտանացի ծովակալ Ս. Կարդենի կողմից մշակված պլանի համաձայն՝ խորտակելով թուրքական ամրությունները և ականազերծող նավերի միջոցով ականազերծելով նեղուցը՝ դաշնակիցների նավատորմը շարժվելու էր Կոստանդնուպոլիս: Է. Գրեյը հավատացած էր, որ ռազմագործողության հաջողության դեպքում այնտեղ կունենար պալատական հեղաշրջում[38]: Անգլո-ֆրանսիական նավատորմը, փետրվարին 19-ին ռմբակոծելով Դարդանելյան ամրությունները, սկսում է ռազմագործողությունը: Հրետակոծումը կրկնվեց փետրվարի 25-ին, ինչի արդյունքում նեղուցների մուտքը պաշտպանող ամրությունները խորտակվեցին: Թվում էր՝ ամեն ինչ վերջացած էր: Սակայն Դաշ-

---

[32] A. T. Mahan. The problem of Asia and its effect upon international policies. Boston,1900, p. 117.

[33] *Ս. Թորոսյան. Դարդանելից մինչև Պաղեստին, թարգմ. անգլ., Երևան, 2012, էջ 29:*

[34] Մ. Գիլբերտ. *Նշվ. աշխ., էջ 195:*

[35] J. S. Corbett. Naval operations. vol. 3. London, 1923, p. 206.

[36] А. К. Коленковский. Дарданелльская операция. М.–Л., 1930, с. 25.

[37] *Հրամանի տեքստը տե՛ս* W. S. Churchill. The world crisis. Vol. 1. London, 1938, pp. 716–718.

[38] Մ. Գիլբերտ. *Նշվ. աշխ., էջ 193:*

նակիցների նավատորմի՝ մարտի 18-ի գլխավոր գրոհը ձախողվեց. երեք խոշոր զրահապատ ռազմանավեր ("Բուվե", "Օուշն", "Իռիզիսթրլ") խորտակվեցին:

Ընթացող ռազմագործողությանը զուգահեռ ավելի է ուժեղանում ռուսական կողմի պահանջը՝ կապված նեղուցների խնդրի հետ: 1915 թ. մարտի 4-ին Սերգեյ Սազոնովը Պետրոգրադում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեսպաններ Ջոն Բյուկենենին ու Մորիս Պալեոլոգին է հանձնում հուշագիր՝ պահանջելով նեղուցների, Կոստանդնուպոլսի, Գալիպոլի թերակղզու, Հարավային Թրակիայի միացումը Ռուսաստանին[39]: Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան՝ ռուսական կողմի պահանջները բավարարելու համար, ներկայացրին սեփական առաջարկները, որոնք ընդունվեցին ռուսական կողմից: Մասնավորապես, Կոստանդնուպոլսի դիմաց Մեծ Բրիտանիային էր անցնում Պարսկաստանի "Չեզոք գոտին" (բացառությամբ Սպահան և Յազդ քաղաքների, որոնք անցնում էին ռուսական "ազդեցության գոտու" մեջ), ճանաչվում էին ֆրանսիական ու բրիտանական "հատուկ շահերը" Ասիական Թուրքիայում, Մեծ Բրիտանիան իրավունք էր ստանում ստեղծելու Արաբական անկախ պետություն, որը ներառելու էր մահմեդական սրբավայրերը: Իր հերթին Ֆրանսիան ապագայում ստանալու էր Սիրիան և Կիլիկիան: Այս պայմաններով մարտի 18-ին ձևավորվեց եռակողմ գաղտնի համաձայնությունը[40]: Այդպիսով, փաստորեն, բրիտանական ռազմավարությունը նեղուցների հարցում վերջնականապես մտավ փակուղի:

Ստեղծված իրավիճակում՝ ծովային և ցամաքային համատեղ ռազմագործողություն սկսելու մասին, էքսպեդիցիոն զորքերի հրամանատար, գեներալ Յան Համիլտոնի կողմից Մեծ Բրիտանիայի Ռազմական խորհրդին մարտի 26-ին[41] ներկայացված առաջարկությունն ընդունվեց ու ապրիլի 25-ին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից իրականացվեց էքսպեդիցիոն զորքերի ափհանում Գալիպոլի թերակղզում[42]: Սակայն այդ ուժերի հրամանատարության անվճռական գործողություններից և մի քանի ամիս շարունակված արյունալի մարտերից հետո, բրիտանական կառավարությունը 1915 թ. դեկտեմբերի կեսերին սկսեց Գալիպոլի թերակղզուց զորքերի էվակուացիան, որն ավարտ-

---

[39] В. В. Готлиб. *Նշվ. աշխ., էջ 129:*

[40] G. Lenczowski. The Middle East in world affairs. Ithaca – New York, 1952, pp. 68–69.

[41] G. H. Allen and others, The Great war. Vol. 4, Philadelphia,1919, pp. 102–103.

[42] *Գալիպոլի թերակղզում էքսպեդիցիոն զորքերի ափհանման և մարտական գործողությունների մասին մանրամասն տե՛ս* I. Hamilton. Gallipoli Diary, in two volumes, London, 1920.

վեց 1916 թ. հունվարի 9-ին: Դաշնակիցների տված զոհերի և վիրավորների թիվը հասնում էր մինչև 300.000-ի, իսկ թուրքական կողմինը՝ մինչև 250.000-ի[43] :

Հետաքրքրական է, որ Գալիպոլիի ռազմագործողության ընթացքում, Վանի և Մուսա լեռան հերոսամարտերի ֆոնին, Եգիպտոսում գործող բրիտանական զորքերի հրամանատար, գեներալ Ջոն Մաքսվելի միջոցով հայ հասարակական-քաղաքական գործիչների կողմից 1915 թ. աշնանը բրիտանական ռազմաքաղաքական ղեկավարությանն առաջարկություն է ներկայացվում արտասահմանում բնակվող, ինչպես նաև Մուսա լեռից տարհանված հայերից բրիտանական հրամանատարության ներքո հայկական կամավորական զորախումբ ստեղծելու և Ալեքսանդրետում կամ Կիլիկիայում ափհանում իրականացնելու մասին: Մասնավորապես, Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցության ղեկավար գործիչներից Մ. Վարանդյանը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությանը խոստանում էր, որ 20.000 հայ կամավոր պատրաստ են իրենց մասնակցությունը բերել Ալեքսանդրետի հնարավոր ափհանման ռազմագործողությանը[44]: Սակայն Մեծ Բրիտանիայի ռազմական և արտաքին գործերի նախարարությունները մերժում են այս առաջարկությունը՝ պատճառաբանելով աշխարհագրական, ռազմավարական և այլ խնդիրներով[45]: Փոխարենը բրիտանական կառավարությունը բավարարվեց 1915 թ. մայիսի 24-ին Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունների հետ հրապարակված հայտարարությամբ, որը դատապարտում էր Օսմանյան կայսրության տարածքում սկսված հայերի ջարդերը՝ այն անվանելով "մարդկության ու քաղաքակրթության" դեմ ուղղված գործողություն և խոստանում էր պատժել այն իրականացնող թուրքական կառավարության անդամներին[46]:

Թեև գերմանացի գեներալ Ֆրիդրիխ Կրեսս ֆոն Կրեսենշտեյնը նշում էր, որ եթե Լիման ֆոն Սանդերսը և գերմանական թնդանոթներն ու ռազմամթերքը չլինեին՝ բրիտանացիները երկու շաբաթում կվերցնեին Դարդանելը[47], սակայն ինչպես հետագայում պարզաբանում էր Վեհիբ փաշան, որ "Անգլիացիք չուզեցին զրահանավերով մտնել Տարտանել և Պոլիս: Անոնց հաշիվն էր, թէ որու համար տիրենք Տարտանելին, քանի որ Պոլիսը և Նեղուցները խոստացված են

---

[43] Е. Ф. Людшувейт. *Նշվ. աշխ., էջ 131:*

[44] M. J. Somakian. Empires in conflict: Armenia and the Great Powers.1895–1920, London - New York, 1995, pp. 80–81.

[45] A. Nassibian. Britain and the Armenian Question.1915–1923. London, 1984, p. 92.

[46] *Հայտարարության տեքստը տե՛ս Տ. Տիգրանեան. Անգլիան և հայերը, Երևան, 1994, էջ 132, Տ. Սարուխանյան. Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915–1918 թթ.), Երևան, 2005, էջ 71–72:*

[47] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 21, թ. 2:*

Ռուսիո"[48]: Նույնը կրկնում էր նաև Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Հանս ֆոն Վանգենհայմը. "Անգլիոյ շահը կը պահանջէ չգրաւել Պոլիսը, որովհետեւ եթէ զայն գրաւէ, ստիպուած պիտի ըլլայ Ռուսիոյ յանձնել՝ համաձայն դաշնակիցներու միջև կնքուած գաղտնի դաշինքին"[49]: Իր հերթին ռազմագործողության մասնակից, օսմանյան բանակի հայազգի սպա Սարգիս Թորոսյանը իր հուշերում գրում է, որ բրիտանական և ֆրանսիական "վարչապետներն ու դիվանագետները դողում էին սոսկ այն մտքից, որ ռուսները ստանում են Կոստանդնուպոլիսը՝ որպես իրենց անհատական մրցանակ, իսկ հետո փակում Սուեզի դարպասներն ու կործանում Անգլիայի հնդկաստանյան քաղաքականությունը, ինչպես նաև վերջ դնում անգլիական ու ֆրանսիական գերիշխանությանը Միջերկրականում: … Արդյունքում դյուրին հաղթանակն ինչ-որ ձևով վերածվեց հեղհեղուկ ու կասկածելի մի պարտության"[50]:

Այստեղ տեղին է մեջբերել պատմաբան Վահան Նավասարդյանի կարծիքը, ով իր աշխատության մեջ գրում է, որ երբ եվրոպական տերություններն "Ուզում էին Ռուսիան իրենց հետ ունենալ՝ դառնում էին զիջող Նեղուցների հարցում, իսկ երբ այս բարեկամութեան կարիքը սուր կերպով չէին զգում՝ համախմբում եւ խեղդում էին Ռուսաստանը Նեղուցների ջրերում"[51]: Ոչ պակաս դիպուկ է նկատում Լ. Շանթը՝ նշելով, որ "Օսմանյան կայսրության "ժառանգորդներու" այդ շատութիւնն է պատճառը եւ մանաւանդ Ռուսաստանի շատ խիզախ դէպի հարաւ շարժուիլը, որ կը ստիպէ եւրոպացիները, եւ մանաւանդ անգլիացիները, արուեստական միջոցներով երկարելու Թուրքիայի գոյութիւնը"[52]:

Նեղուցների հարցում բրիտանական ռազմավարության հայտնվելը փակուղային իրավիճակում առաջ բերեց ռազմավարական մի շարք խնդիրներ հենց Դաշնակիցների համար: Նեղուցների նկատմամբ գերմանաթուրքական կողմի վերահսկողության պահպանումն ու Առաջավոր Ասիայի հետ ազատ կապը, ինչպես նշում է ծովակալ Ա. ֆոն Տիրպիցը, թույլ տվեց գերմանացիներին ստեղծելու լրացուցիչ վտանգ բրիտանացիների համար Եգիպտոսում և Միջագետ-

---

[48] *Լ. Շիրինյան. Տարտանելի առասպելը կամ ռազմավարական PR-ի թուրքական "Սև խոռոչը".– "Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ", Երևան, 2014, -2, էջ 149: Մանրամասն տե՛ս Ռ. Տեր-Մինասյան. Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Զ, Կարսէն՝ Պոլիս, 1909, Թեհրան, 1982, էջ 253–260:*

[49] *Տարտանէլի պատերազմը.Քաղուած զանազան հրատարակութիւններէ, էջ 368:*

[50] *Ս. Թորոսյան. նշվ. աշխ., էջ 49:*

[51] *Վ. Նավասարդյան. Նեղուցները (Վոսփոր և Դարդանել). Թրքական ջրուղիները և Հայ դատը, Գահիրե, 1947, էջ 125:*

[52] *Լ. Շանթ. Մեր անկախութիւնը, Պոսթըն, 1925, էջ 79:*

քում՝ ստիպելու նրանց հսկայական ուժեր տեղափոխել այնտեղ[53]: Դարդանելում Դաշնակիցների պարտությունը հանգեցրեց նաև չեզոքություն պահպանող Բուլղարիայի պատերազմի մեջ մտնելուն: 1915 թ. օգոստոսի 19-ին Բուլղարիան համաձայնագիր է ստորագրում Օսմանյան Թուրքիայի հետ[54], իսկ սեպտեմբերի 6-ին՝ ռազմական կոնվենցիա Կենտրոնական տերությունների հետ[55]: Այդպիսով՝ ձևավորվում է Քառյակ դաշինքը:

Նման պայմաններում ավելի ամրապնդվեց Ռուսաստանի դիրքերը՝ Մերձավոր Արևելքում ազդեցության գոտիների և, մասնավորապես, Օսմանյան կայսրության "ժառանգության" բաժանման համար Տերությունների միջև ընթացող բանակցություններում, որոնք ավելի ուշ հանգեցրին անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերի ("Սայքս-Պիկո-Սազոնով") ստորագրմանը (1916 թ. ապրիլի 26, մայիսի 16 և սեպտեմբերի 1):

Դարդանելյան ռազմագործողության տապալումը խախտեց նաև Հայկական հարցում տասնամյակներ շարունակ եվրոպական խոշոր տերությունների միջև գոյություն ունեցած ուժերի ռազմավարական հավասարակշռությունը և արդյունքում, ինչպես նշում է քաղաքագետ Լևոն Շիրինյանը, Օսմանյան կայսրությունը ստացավ "Քարտ Բլանշ"[56] ու իրականացրեց Հայոց ցեղասպանությունը: Սրան հաստատելու է գալիս ամերիկացի ռազմավարագետ Նիկոլաս Սփայքմենի այն դիպուկ դիտարկումը, ըստ որի՝ փոքր բուֆերային պետությունների գոյությունը պայմանավորված է խոշոր տերությունների միջև առկա ուժերի հավասարակշռությամբ, իսկ "երբ անհետանում է ուժերի հավասարակշռությունը, փոքր պետությունները, սովորաբար, անհետանում են դրա հետ միասին"[57]:

Այսպիսով՝ Դարդանելյան ռազմագործողությունից հետո տարածաշրջանում հաստատվեց ուժերի ռազմավարական նոր հարաբերակցություն, իսկ պատերազմը ձգվեց ևս երեք տարի՝ մինչև 1918 թ.:

---

[53] А. Тирпиц. *Նշվ. աշխ., էջ 360:*

[54] Г. Киссинджер. Дипломатия. Пер. с англ. М., 1997, с. 284

[55] *Կոնվենցիայի կետերը տե՛ս* Н. Корсун. Балканский фронт Мировой войны 1914–1918. М., 1939, с. 30–31.

[56] *Լ. Շիրինյան. Հայոց ցեղասպանության Դարդանելի "Քարտ Բլանշը". Հայոց ցեղասպանություն–100. Ճանաչումից՝ հատուցում. Միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Երևան, 2015, էջ 177–179:*

[57] N. J. Spykman. America's Strategy in World Politics: The United States and the Balance of Power. New York, 1942, p. 20.

ДАРДАНЕЛЛЬСКИЙ СТРАТЕГИЧЕСКИЙ ТУПИК

АЙК НАЗАРЯН

Резюме

В начале Первой мировой войны уже стало ясно, что война на Западном фронте не даст прорыва для обеих сторон. Вследствие, Кайзеровская Германия с помощью Османской империи открыла новый фронт на Востоке против Британской и Российской империй. В свою очередь, союзники (Антанта), в частности, британцы решили захватить Дарданеллы и Константинополь, чтобы ликвидировать угрозу со стороны Турции и Германии, направленную против Суэцкого канала, Персии и Индии, и одновременно нанести непрямой удар Германии. Российская империя также стремилась завладеть проливами Дарданеллы и Босфор. Однако, в результате соперничества между Великобританией и Россией, в 1915 г. Дарданелльская военная операция провалилась, и война продлилась еще на три года. Впоследствии это дало возможность турецкому правительству осуществить Геноцид армян на территориях Османской империи.

THE DARDANELLES STRATEGIC IMPASSE

HAYK NAZARYAN

Summary

At the beginning of the First World War it already became clear that the war in the Western Front would not be successful for the both sides. Thus, with the support of the Ottoman Empire a new front was opened by the Imperial Germany in the East against Great Britain and Russia.

In their turn, the Allies (the Triple Entente), particularly the British, decided to occupy the Dardanelles and Constantinople to neutralize the danger to the Suez Canal, Persia and India from the Ottoman Empire, at the same time to make an indirect strike at German Empire. The Russian Empire struggled for getting the Dardanelles, too. Nevertheless, as a result of the competition between Great Britain and Russia, the Dardanelles military operations organized by the Allies, failed in 1915. Consequently the war extended three more years, which gave a chance to the Turkish government to realize the Armenian Genocide in the territories of the Ottoman Empire.